



Ա Ր Ա Ր Ա Տ

Թ. Ի. Թ. — ՇՐՋԱՆ. Ժ. Ե.

1882

ՏԱՐԻ Ժ. Ե. ՍԵՊՏԵՄ. 30.

ՔՐԻՍՏՈՆԷԻ ՄԻՒԹԱՐՈՒԹԻՒՆԸ

ԻՒՐ ԿԵԱՆՔ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԻՆ ՈՒ ԻՒՐ ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ.

Քրիստոս իմ Տէրս՝ իմ հաւատարիմ հովիւս է. Նորան կապաւինիմ իմ բոլոր կեանքիս մէջն. երբ որ մօլորուած էի, Նա ինձ տարաւ կրկին հանեց ուղիղ ճանապարհն: Նրանից որ հեռու չլինիմ, ինձ ոչ մի բան չպակսիլ. ինչ որ ինձ պէտք է, Նա կհոգայ. եթէ որ հոգսն ինձ սաստիկ նեղացնելու եւս լինի, հաստատ զիտեմ, որ երկար չքաշիլ: Փրկիլս է ինձ արածեցնողը կանաչ ու պարարտ մօրղազետիւններում ու ինձ համար այնպիսի համով ջուր է պատրաստում, որ խմելով չկշտանամ. ինչ պէտք է վախենամ վտանդից, երբ որ Աստուծոյ ողորմութիւնն իմ վրաս է: Երբ որ աշխարհիս զեղեցկութիւնն ու վայելչութիւնն եւս փչանայ. եթէ կենացս լոյսն եւս խաւարի, մի քաղցր մխիթարութիւն մնումէ ինձ համար թէ՛ Աստուած է իմ ապաւէ՛նս:

Ա՞ր տեղ են Տիւրոսն ու Սիդոնը, Հին Ժամանակուայ փառաւոր քաղաքներն, որոց հրապարակները (շուկաները) բոլոր աշխարհի ապրանքները բերելու, հաւաքելու տեղերն էին, որոց ունեցած հարստութեան վերայ տմեն ազգերը զարմանալով էին խօսում: Այլեւս ոչ ոքի բերանից չես լսիք մի խօսք նրանց զի-զած գանձերի մասին, կամ պալատների, բուրգերի ու նաւատորմիղների մասին: Ծանփապարհօրդները տեսնումեն Ասորոյ ա-

նապատներումն՝ միայն նրանց աւերակներն: — Ուր է մեծ քաղաքը Բաբելոն, որ ամեն ազգերի վրայ սարսափ էր ձգում իւր շէն ժամանակը: Նորա զօրեղութիւնից ու մեծութիւնից ինչո՞ւ այլ եւս չեն գողում բոլոր արեւելքը: Աւր են բանաւերն, որոց մէջ փառմէին խեղճ հրէաները: Աւր են վայելչութիւնի համար շինուած այն զարմանալի պարտէզներն, որ աշխարհիս հրաշքն էին համարւում: Այ մի բան չկայ, որ նորանց տեղը ցոյց տայ, այն՝ հրաշքի տեղ անց կացող ու ահագին՝ գլոր պատերով պատած պարտէզների տեղերն եմ ասում, որոց պատերին գալիս խփւում էին ծովի ալիքների նման, գոգոհ ազգերի անդօր բարկութիւնն ու փշրւում: — Այժմ եւս Քաղզէացւոց երկրի դատաւայրերումը կանոնես բարձրացած, թուփերով պատած՝ հողաբլուրներ, որ քանդուած ահագին պատերի մնացորդներն են: Օձեր են բնակւում այդ ծուռ ու մուռ փոքրիկ ծառերի մէջն ու յափշտակող, պատառող գաղաններ են որսի ման գալի փառակների շուաքների մէջն: Մարդոց շինած ամենաերեւելի շէնքերն եւս ի՞նչ են որ, եւ երկաթ ժամանակ են արդեօք մնում աշխարհիս երեսին:

Աւ դու, Երուսաղեմ, սուրբ երկրի աչքը, քաղաքների թագն ու պարծանքը, որի մէջը մի ժամանակ Պաւթի քնարն Աստուած էր փառաբանում, որի մէջ Սողոմոնի թագաւորական աթոռի չորս կողմը արեւելքի բոլոր թանկագին բաներն էին պսպղում ու հարստութիւններն բերւում. դու ի՞նչպէս ես ընկել: Քո Տաճարդ, որ մի ժամանակ բարեպաշտ ուխտաւորների ազօթք անելու մեծ տեղն էր, այն տաճարդ է այժմ. քո ժողովուրդդ ի՞նչ եղան. զան ու ցրիւ ընկան աշխարհիս ամեն կողմերն. ինչպէս որ յարգը քամին տանում է ու գէս ու գէն ցրւում: Քո աւերած քաղաքդ, եթէ որ բոլորովին անմարդաբնակ անապատ չէ գարձել, այն բարեհամբաւ յիւտակն է պահում, որ Յիսուս Քրիստոսն այն տեղ է մարմին առել ու մարդայել եւ իբրեւ մարդ՝ այնտեղ ման եկել, այն տեղ իւր արիւնը թափել Վոդգոթա սարի վրայ. եթէ այդ յիշատակը չլինէր, իւր այժմեան խեղճ գրութիւնն ու յիճակն եւս, որ ունի ու մի քաղաքի հաշիւումն է համարւում՝ քիչ շատ, այն եւս չէր ունենար ու վաղուց հողի հետ հաւասարուած կլկնէր, ու անունն եւս տուող չէր լինի:

Այն բոլոր արձաններն, որ հին աշխարհի երկրաւոր մեծութիւնն ու փառքն էին ցոյց տալիս, հզօր իշխանների պատուին համար կանգնած այն սիւններն, այն յաղթանակի դրներն, որից անց էր կենում իւր փառքիցն արբած յաղթականն, որոյ վրայ զարմանում էին, — այդ բոլորն այժմ ջարդ ու բուրդ են եղել, ոչնչացել։ Այն մեծամեծ քաղաքները կործանուելուց ու աւերակներ դառնալուց յետոյ՝ ուրիշ քաղաքներ են հիմնուել ու բարձրացել ու նոյնպէս անուանի ու փառաւոր եղել, որ՝ հաղարաւոր տարիներից յետոյ՝ առաջ եղած մեծ քաղաքների նման՝ գեանի հետ հաւասարուին։

Ուր են աշխարհիս վրայ ամեն տեղ ահ ու երկիւղ ձգող զարհուրելի իշխաններն, որ երկաթի գաւազանով էին հրամաններ տալիս ազգերին եւ իրանց՝ աստուածներ ճանաչում ու ճանաչել տալիս։ — Ուր են աշխարհակալներն իրանց անթիւ զօրքերովն, որոց առաջին իրրեւ գերիներ դողում էին՝ երբեմն Ասիան, երբեմն եւս Աւրոպան։ Ուր են նոցա հաստատած թագաւորութիւններն, որ արեւելքից մինչեւ արեւմուտք էին գնում, հասնում։ — Այժմ մի թէ ոչ ոք չէ դողում նորանց՝ ամպի նման՝ գոռգոռող ձայնից։ Նորանց մի աչք ձգելն, մի մտիկ տալն սարսափած ազգերի ու թագաւորների համար՝ այլ եւս օրէնքի տեղ չեն անց կենում։ Ուր են նորանց մեծ մեծ գործերի արդիւնքն, որ վախկոտ շողորթութների բազմութիւնն մինչեւ երկինքն էր բարձրացնում, հանում։ — Ուր են կորան։ Այն ուրախութեան ձայներն, որ բռնակալներին աստուածացնում էին, բարձրանալով, օդում ցնդեցան՝ իրրեւ մեծ մեծ անէծքներ նոցա գերեզմանների վերայ։

Եւ դուք, որ մի ժամանակ ձեր կեանքը մեծ ու շուայլ անառակութիւնների ու զեղխութիւնների էիք զարձրել, լող տալով ձեր անչափ հարստութիւնների մէջն, դուք, որ մի օրուայ սարքած ուրախութիւնի մէջ աղքատների բոլոր քրախնքն էիք ցամաքացնում, չորացնում ու ձեր սատկելու գէշն (լաշը) աշխարհքի հեռու տեղերից դուրս եկած թանկ թանկ մետաքսեղէնների մէջը ծածկում, թաթխելով, զարդարուելով — կարողացա՞ք արդեօք ձեր մոռումը զրածին հասնել, աշխարհումս ամենալաւ ու երանի տալու կեանքն անցկացնել։ Զէք չարչարում, սպանում արդեօք ձեզ, ձեր խղճմտանքի ձեզ տուած անուանե-

յի նեղութիւնն, մահուան երկիւղը ձեր անկողինումը, որոյ մէջ մտել էիք հանգստանալու մտքով ու քունը ձեր աչքից փախչում էր: Ինչի՞ էիք նախանձում աղքատ մարդոց առողջութեանն, բարեբաղդ մարդոց ուրախ սիրտ ունենալուն, խմստուն մարդոց հոգու անլրդով խաղաղութեանն: Մահն, երբ որ ձեզ աշխարհքիս վայելչութիւններովն արբած, կուրացած գրութիւնից (տեղիցը) կառնի, կտանի, որչափ եւս չուզենաք, կսորվեցնի ձեզ, որ աշխարհքիս բոլոր հարստութիւններովն եւս անկարելի է գնել ճմարիտ ու հաստատ երջանկութիւն երկրիս վրայ:

Աւեր են այն ամէն մարդիկը, որ Աստուած էին անարգում, առաքինութեան վրայ ծիծաղում, սուրբ բան ծաղր անելու սուր սուր խօսքեր հնարում, ասում ու յաւիտենական անմահ կ'անքի վրայ յոյս ունենալը խելքից զուրկ մարդոց միտքարութիւն անուանում: Իրանց խելացնորութեանը մէջ Աստուծոյ դէմ գլուխ էին բարձրացրել ու չէին ընդունում նորա տեսչութիւնն, վերջը վերջն՝ իրանց մէջը գտան սարսափելի դատաստանն ու դատապարտութիւնն:

Այս է ահա երկրաւոր բանի ունայնութիւնն: Ամենայն փառքից ու մեծութիւնից ինչն է մնում. հոգ ու փոշի:

Բայց Յիսուս կենդանի է եւ ես Նորանով: Նա կենդանի է եւ կենդանի պէտք է լինի մինչեւ աշխարհիս վերջը եւ ես Նորանով յաւիտեանս սլտի կենդանի մնամ: Թագաւորական տախտեր կրկտարտուին, քաղաքներ կքանդուին ու այրի մնացած կնկայ նման սուգ կնստին, թագաւորութիւններ կկործանուին, աշխարհք աշխարհքով կանցնի՝ բայց Նորա ճշմարտութիւնը կմնայ յաւիտեան: Նա մի թագաւորութիւն է հաստատել՝ ոչ թէ հոգ ու աւազից եւ աւազի վրայ, այլ մի երկնաւոր թագաւորութիւն, ուր որ հոգիքն են, որոց հաւաքումէ իւր Երկնաւոր Հօր աթոռի չօրս կողմն. — ես եւս Նորա յաւիտենական թագաւորութեան քաղաքային եմ. եւ այնպէս յաւիտենական եմ, ինչպէս ո՞ր յաւիտենական է Նորա թագաւորութիւնն: Նա իմ սրտումս մի ո՞րակութիւն, մի երջանկութիւն է գրել, որ ոչ աշխարհք յաղթողի զէնքը կյաղթի ու ինձանից կհանի, եւ ոչ մի հզօր ու Աստուծոյ կրակին աէր մարդ կարող է գինը գտնի ու իւր միլիոններովն ինձանից առնի. Նա ինձ համար մի երջանկութիւն է

պատրաստել, որոյ մօտը՝ մի ամբողջ կեանքի զգացմանց յուզմունքն ու կատարութիւնն՝ մի կաթիլ թոյնի են միայն նման, որ բնկնումէ կեանք ու կենդանութիւնով լի ուլկիանոսի մէջ: Ես կարող եմ խոնարհանալ, կարող եմ բարձրանալ. ես կարող եմ աշխարհիս բռնակալների սաստիկ թթուած երեսին ժպտել. ես կարող եմ կեանքի մրրիկների՝ իմ գլխիս եկած փորձանքների մէջ՝ ուրախ ուրախ ման գալ. ես կարող եմ հազար մահի առաջը գնալ, առանց սրտիս մէջն երկիւղի մի նշան ունենալու: Ես ասեմ Բաբելոն եմ՝ Նորաշուք, «Է որ ինչ քաղաքն է որտեղ ուրախ եմ, որ է եմ Քրիստոս Առնակաւոր»:

Ես քաջ եմ, ես զօրաւոր եմ՝ Նորանով, ոչ թէ մարմնովս, այլ հոգովս: Եւ հոգի չէ, որ Ամենակարող զօրութիւն է երկրնքումն ու երկրիս վրայ: Հոգին չէ, որ առաջ հոգին կեանք է տալիս, ու մեռած ծանրութիւնը շարժումէ: Քրիստոսի զօրութիւնն եւս, որ ունէր աշխարհի վրայ, հոգւոյ զօրութիւն էր երկրաւորի վրայ: Մարմնովը՝ իւր ստեղծած ծառայի, մարդկային կերպարանքն ու բնութիւնն առած էր ման գալիս աշխարհիս վրայ, բայց այժմ՝ Նորա անունովն աղօթք են անում աշխարհիս ամեն կողմերն, ամեն հազարաւոր տարիներումն՝ ու աշխարհիս թագաւորները Նորա առաջին գետինն են խոնարհած, հոգի հետ հաւասարուած: Իւր ստեղծած ծառայի, մարդիս կերպարանքովն էր ման գալի Աստուածային մարդն: Զուր տեղն էր Հրէաստանը՝ Նորան երկրաւոր թագաւորութեան թագ առաջարկում. զուր էին բարձր ձայնով «ովսաննա» կանչում Դաւթի որդուն: Նորա համար ոսկի թիթեղի փառքն ու պայծառութիւնն, թիթեղի նման պսպղող, շողշողացող իշխանութիւնը քիչ էր: Ի՞նչ է ձեր թագաւորական թագը՝ Աստուածութեան լրութեան առաջին: — Նորա թագաւորական գաւազանը պիտի իշխէր երկրաւորից բարձր մի թագաւորութեան վրայ. այնպիսի մի թագաւորութեան, որ անանցանելի է, որ վերջ չունի: Իմ մէջս եւս կայ, իմ մէջս եւս բնակւումէ երկրաւորից բարձր, Աստուածայինը: Յիսուս սորվեցրեց ինձ ճանաչել իմ իսկ բարձրութիւնս: Այս բարձրութիւնն աւելի է, քան թէ ինչ որ երկիրս կարող է ինձ տալ մեծ ու բարձր բան: Ո՛չ ձեր շքանշանների, ո՛չ ձեր խաչերի, ո՛չ ձեր աստղերի, ո՛չ ձեր տուած աստիճանների, ո՛չ ձեր ինձ արած պարգեւների, ո՛չ ձեր հանդէսների ու տօնա-

խմբութիւնների, եւ ոչ ձեր զեղխութիւնների հետ կիսխեմ ես հոգոյս այս բարձրութիւնը, աշխարհիս հրաման տուողներ, ձեր զգացմունքին հնազանդելով. ձեր արած վայելչութիւններն, որոնցով խարվումէք բոլոր ձեր կեանքումն, չէք գնիլ դուք իմ սրտիս հանգստութիւնն, իմ աներկիւղութիւնս, իմ ուրախութիւնս, որ սնիմ: Ես մի հոգի եմ. ես՝ աշխարհիս վրայ ապրած ժամանակս՝ արգէն մի աւելի բարձր, մի գերազոյն աշխարհքումն եմ ապրում: Մարմնովս քաղաքական կեանքի նեղ ու սահմանափակ շրջանումն եմ ման գալի, իմ սովորական իմացած գործս եմ անում, իմ երկրաւոր կոչմանս եմ ծառայում, մի քանի մահկանացուների ինձ արեւակից, աղբական եմ անուանում: Բայց իմ հոգւովս ձեր պատիկ երկիրների սահմաններից չեմ, դուքս եմ. ինչու որ բոլոր աշխարհս իմ հայրենիքս է, յաւիտենական Աստուածն իմ թագաւորս ու Հայրս է, ամեն սաեղծութեամբ հոգիներն իմ եղբայրներս են՝ թէ՛ երկրիս թագաւորի, իշխանի հոգին, եւ թէ՛ յետին աղբատիւնը: Արրահամի ու Մովսէսի որպէս եւ այն ազնիւ մարդոց հոգիներն, որ հաղարաւոր օտարիներ անց կենալուց յետոյ՝ ինձանից յետ այս մօրակի հոգ դառնալու փոշին իրանց վրայ կառնուին ու իրքեւ մարդիկ երկրիս վրայ ման կգան: Մինչեւ Յիսուս Քրիստոսն եւս իմ եղբայրս է: Դորտ համար նա ինձ ընդունեց, երբ որ ինձ Աստուծոյ որդեգրելու տարաւ: Դորանով եմ ես զօրուոր, որ յաւիտենական էակի ազգակից եմ, որ Աստուծոյ զաւակ եմ:

Ես ամեն Բանի համար զօրեղ եմ Քրիստոսով. որովհետեւ նա ինձ յայանեց իմ բնութեանս մէջ եղած, իմ հետո ծնած իմ արժանաւորութեանս գաղանիքը: Բարձր կոչումների համար ծնուած լինելուս հրաշալիքն: Նա ինձ սորվեցրեց հոգիների հոգուն երկրորդագութիւն անելու, նորան մօտենալու հոգւով ու ձմարտութիւնով: Նորանով ունիմ ես այն սուրբ ու աներկիւղ հաւատն, որ Աստուած ինձ հետ է, որովհետեւ ես նորա հետն եմ: Եւ եթէ նա իմ հետս է, նա, սրոյ տառաքին երկնային քերտովքըն ահ ու երկիւղով եւ մեծարանքով ծուր են գնում, Արոյ մի մտիկ տալուց ամբողջ աշխարհքները դողում են. ով է կարող ինձ հակառակ կանգնել: — Դուք, որ ձեր ունեցածի, ձեր զօրութեանը վրայ էք հիմնում ձեր անբաղդութեան շէնքը, մի անգամ որ շուռն քաշել չկարողանաք, մի անգամ որ բռնուի

շունչներդ, ու ձեր արիւնքերդ որ չխփի, անպիտան ու զղուելի բան կդառնաք, որովհետեւ կհասէք, կփռէք, կփծանաք: Դուք, որ իշխանութիւն ձեռք առած, ձեր կամքը, ձեր սրտի ուղածը, ձեր խելքին եկածն էք յառաջ տանում ու ձեզ աշխարհքի վերայ հրաման բանեցնող էք կարծում, որ Աստուծոյ օրէնքը բանի տեղ չէք դնում, արհամարհում էք ու ձեր մաշակի հաճոյքն ու ցանկութիւններն օրէնքի տեղ անց կացնում: որ արդարութիւնն ու իրաւունքը սոքի տակ էք տալի ձեր հպարտութիւնովն, որ անմեղի մեղն էք մտնում ձեր վաւառոյ գարշելի գազանութիւնովն, ոյժ բանեցնելով, ինչ է թէ ոյժ ունիք ու գիտէք, որ ձեռքներիցդ կգայ յաղթելու: որ բարի անուն, բարի օրատ ունեցող ու ազնիւ հոգւոյ տէր մարդին՝ կամ մարդի տեղ չէք դնում, որովհետեւ ձեզ նման ամեն վատութիւնի մէջ չէ մեծացած, կամ առում էք ու հեռու պահում, որովհետեւ նորա վարքն ու կեանքը ձեզ անտանելի է, ձեր վարք ու բարքին յանդիմանութիւն է, կամ անուշն էք կտարում մուր էք քսում նորա վրայ, սուտ յանցանքներ գնելով վրան ինքներդ, կամ ուրիշներին սորվեցնելով, որ կեղտոտեն, մրտեն, ձեզ մի փոքր նրման լինի, կամ հալածում էք թշնամարար, ձեր ձեռքն ունեցած իշխանութիւնն անգեղարար՝ չարաչար գործ գնելով, ինչ է թէ ձեզ չէ պատուում, որովհետեւ ձեր վարմունքով ու գործքով ոչ մի տեղ չէք թողել որոյ եւ իցէ օրաումն ձեզ պատուելու, ուր մնայ թէ սիրելու ու ձեզ համար՝ ամենայն աստուածահաճոյ ու մարդոց օգուտ բերող ծառայութիւններն ուրախութեամբ կատարելու ու մինչեւ անգամ իւր կեանքը չխնայելու, այդ տեսակ մարդոցդ եմ ասում, ահանջներդ լաւ բաց արէք, լսեցէք ու իմացէք, որ Աստուած իմ հետն է, ի՞նչ էք կարող ինձ անել, ի՞նչ կգայ ձեռներիցդ: Իմ մարմինս կարող էք սպանել: բայց իմ եսս, իմ էութիւնս, որ իմ անմահ հոգիս է, դուք չէք կարող սպանել: Հոգիների թագաւորութիւնը կեանքի ու կենդանութեան թագաւորութիւն է: այնտեղ մահն իշխանութիւն չունի ամենեւին: Այս պատճառով ես վախիցս չեմ դողում երկրաւոր իշխանութեան, երկրաւոր ոյժի ու բռնութեան առաջը: Այս բանն ես կարողանում եմ Նորանով՝ իմ Քրիստոսով, որ ինձ ոյժ ու զօրութիւն է տուել, որ ինձ զօրացրել է իւր Աստուածային զօրութիւնովն:

Եւ զօրացած է՛մ Նաբանով՝ հագուել, առաքինութիւնով եմ ասում, որ ստացել եմ Նորանից, եւ որ իմ խղճմտանքիս կեանքն ու կենդանութիւնն է դարձել: Այո՛ առաքինութիւնն է ճանապարհը, որով ես գնումեմ: Աստուծոյ մօտենում, Ստեղծողիս հասնում, առաքինութիւնն է այն կայն, որ ինձ իմ Աստուծոյս հետ է կապում: Ես զօրացած եմ Քրիստոսով, ինչու որ նա բնակում է իմ մէջս, ոչ թէ մարմնով, այլ իւր հոգւովն, իւր խօսքովն, իւր տուած ուսումովն, իւր օրինակելի կեանքովը, մեզ տուած օրինակովն ամեն արգար բանն անելու մէջն: Նա Աստուածանից մեզ համար եղաւ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն ու փրկութիւն:

Նա ինձ փրկեց չարի զօրութիւնից իւր սուրբ խօսքովն, որով բացեց իմ աչքս ու լուսաւորեց իմ միտքս, որ ինքս ինձ ու իմ մեղքի մէջ լինելս տեսնեմ ու հասկանամ, ինչու որ ես մահուան խաւար հովիտների մէջն էի ման գալիս, քանի որ ես իմ ուղղութիւնս ստացած էի զգայական հակումներից ու դորանց ցոյց տուած ճանապարհովն էի գնում. քանի որ ես խելք բանեցնելն ու խորամանկութիւնով հանգամանքներից օգուտ քաղելն ամենամեծ իմաստութիւն էի համարում. քանի որ ես կարծում էի, որ մարդոց տուած պատիւներից աւելի մեծը, աւելի բարձրը չլինիլ. քանի որ ես փառքի ու բարօրութեան մէջ պտուղւմ էի ամէն բազմաւորութեանց պալատների բանալիներն. այդ ժամանակներն ոչ Աստուած, ոչ մարդկանց էի այնչափ սիրում, որչափ ինձ: Քրիստոսով ես բարձր մտքեր ունենալու ճանապարհն իմ առաջիս բաց արի ու հասկացայ պարզ: Այլ որ՝ քաղաքական օրէնքներին համեմատ է վարվում ու ապրում, ու վատ ասելու տեղ չունի, մի օգտակար մարդ կարող է լինել. բայց Աստուծոյ մարդը լինելուցը դեռ եւս շատ հեռու է, ու մնացական, հաստատ բարեբաղդութիւն չունի:

Եւ զօրացւոր Նաբանով, ոչ թէ մարմնովս, այլ հոգւովս. այն մտքով չեմ ասում, որ նորա ինձ պարգեւած լուսովն՝ ես երկրիս վրայ մեծ իշխանութիւն, աւելի հարստութիւն, աւելի անուն ձեռք բերէի, այլ այն եմ ուղղում ասել, որ նորանով ընդունակ եղայ, նորանով կարողացայ այն շնորհքն ունենալ, որ առանց այդ բաներին եւս ապրիմ, որ այդ ամէն բաներից ինձ զրկեմ ու բոլորն զոհեմ իմ յաւիտենական երջանկութեանս: Այս է, որ

քրիստոնէին այնպէս զօրացնումէ, այնպէս աներկիւղ անում, ու այնպէս հարուստ ու վսեմ ամէն հանգամանքների մէջ, որ նա աշխարհքն ու նորա փառքն ուրիշների պէս հեշտ ձեռք բերել չէ կարողանում, բայց ուրիշներից աւելի հեշտ ուրանալն իւր բանն է: Աշխարհք ուրանալ Յիսուսի սուրբ մեծութիւն էր: Նա ամենեւին չէր արհամարհում կեանքի անմեղ ուրախութիւններն, որ նորա կեանքի մէջ, կամ լաւ եւս ասեմ, նորա կեանքի ճանապարհին պատահումէին, ինչպէս մի ճանապարհորդի ճանապարհի վրայ պատահած սառն ու զովացնող ջուրեր՝ տաք օրերին. բայց այդպիսի ուրախութիւններից ամէնից մեծ զուարճութիւն բերող ուրախութիւնի համար եւս չէր թողնիլ իւր ամենափոքր պարտականութիւնն: Այլ մահականացուք. դուք Աստուծոյ համար մառմառի ու ոսկի սեղաններ էք շինում: Կարծումէք դուք, որ բոլոր աշխարհքի Տիրոջը ձեր շինած մեծ ու փառաւոր տաճարներովը կուրախացնէք: Չէ, այդ՝ մեծ փողերով գլուխ եկած գեղեցիկ ու մեծ սեղաններն ու տաճարներն, որ աւելի ջերմեռանդ սրտով աղօթք անելու համար էք շինում, չեն հիացնում յաւիտենական Հոգուն, որ Մովսիսի շինած ամենափոքր խորանովն ամաչեցնումէ աշխարհիս բոլոր ճարտարապետների արհեստն ու հմտութիւնն: Այլ մի երկրաւոր բան, որչափ եւս գեղեցիկ ու կատարեալ լինի, անմահ Հոգին գոհ չլինիր նորանով: Փշանալու բան չէ՞ մի. ուրեմն նորա գերագոյն կատարելութեան առաջին ոչինչ է, մի բռն հող է: Այս պատճառաւ Քրիստոսն Յիսուս անտարբեր աչքով էր նայում կեանքի ունայնութեան վերայ, մարդի, իւր ստեղծած ծառայի կերպարանքով էր ման գալիս, պարզ հագուած, աշխարհիս ամէն հանգստութիւնից, փառք ու պատուից, վայելչութիւններից հեռու իրան պահելով, շատ անգամ մինչեւ իւր գլուխը դնելու տեղ եւս չունէր. եւ գորանով եւս իւր Հոգին ամէն բանից բարձր էր ու մեծ՝ Աստուծոյ նման՝ նորա փառքի ճառագայթն ու էութեան նկարագիրն: Այսպիսի օրինակ թողեց նա մեզ, որ նորա գնացած ճանապարհովը գնանք:

Եւ նորանով է՞ զօրացած. ինչու որ նա սորվեցրեց՝ թէ ինչպէս պէտք է գործածեմ իմ մարդկային կեանքիս մէջ ձեռք բերած բարիքս, որ այս աշխարհիս մէջ իմ Ստեղծողն պարգեւել է ինձ, ինչպէս որ Յիսուս Քրիստոս զօրաւոր էր խօսքովն ու գործովն Աստուծոյ եւ մարդոց առաջին, այսպէս է եւ ամէն մի նորա

Ճանապարհով գնացող մարդը: Անթիւ զօրքերի բաղմութիւն պէտք չէ՝ մեծ բաներ գլուխ բերելու համար. Աստուած հզօր է իւր ամենայեւոր ծառաներովն եւս: Բոլորովին անարգուած Նազովրեցոյ բերանից դուրս եկած մի հատ ճշմարիտ խօսքը չէր մի որ ազգերին ու յետոյ աշխարհը եկող ամբողջ սերունդներին ուրիշ ուզողութիւն տուեց, ուրիշ ճանապարհ բացեց նոցա առաջին, թէեւ աննշան անցայտութեան մէջ էր ապրում ինքն:

Դուք, որ ոսկի դահլիճներումն էք բնակւում ու նաւատորմիղների հրամաններ տալի, որ ընդարձակ դաշտերը ձեր սեպհականութիւնն էք ասում. որ ծիրանների՝ մետաքսեղէնների մէջն էք լող տալի եւ եկամուտներ եկամուտների վերայ հաւաքում, դիզում. դուք երկրաւոր բարիք ինձանից շատ ունիք, բայց ես՝ ձեզանից հարուստ եմ: Ձեր ամրոցները, ձեր նաւատորմիղները, ձեր մեծամեծ կայուածները, ձեր ակնեղէնները ու մարգարիտը, ձեր ահագին եկամուտները՝ մարդիս հոգին երջանիկ չեն անում երբէք. ձեր ցանկութիւններին վերջ չկայ. այս բանն էք ցանկանում, կատարումէք, միւսն էք ցանկանում՝ կատարւումէ. քիչ բան կայ, որ ուզումէք ու անումէք. բայց եւ այնպէս ձեր սիրտը տեղը չէ ընկնում, միշտ անգոհ էք, ինչու որ ձեր մի ցանկութիւնին չհասած՝ միւսն է ծնում՝ ձեր սրտի մէջ, ձեզ միշտ պակաս է մի բան, եւ այնպէս դուք միշտ դժգոհ էք: Եւ Որովհետեւ ամէն բանն եւս ձեզ համար քիչ է, նորա համար եւս աղքատ էք, չունեւոր էք. իսկ ես՝ հարուստ եմ, որովհետեւ ունեցածովս բաւականանում եմ: Իմ քիչ ունեցածիս եւս բոլորն պէտք չէ ինձ՝ իմ սակաւապետ՝ կեանքիս համար: Ուրեմն ես ինձ հարկաւոր եղածիցն աւելին ունիմ, ինձ բան եւս է աւելանում, աւելորդ բան եւս եմ ունենում, որ դուք չունիք, ձեզ պակասում է ձեր ունեցածն, ոչ թէ բան է աւելանում ձեզանից. ես իմ ունեցածիցս ուրիշներին եւս կարող եմ մի մի բան տալ, ուրիշներին եւս օգնել այն բանով, առանց որոյ կարող եմ ես կառավարուիլ: Կարելի է, որ դուք նուիրումէք մեծ գումարներ եկեղեցիների ու վանքերի, հիւանդանոցների ու աղքատանոցների. բայց ես ձեզանից աւելի շատ եմ տալիս. ինչու որ իմ փոքրիկ եկամուտի մի նշանաւոր մասն եմ հանում, տալիս այդ բարեգործական հաստատութիւններին. իմ տուածիս մէջն աւելի օրհնութիւն կայ, աւելի իմ տուածս շահաւոր է, ինչու որ ես

ինքս եմ գնում, պտուռում գտնում նրանց, որ աւելի կարօտ են օգնելու, նորանց նեղութիւնը փորձով իմանում եմ՝ որպէս եւ այն միջոցներն՝ այն ճանապարհներն, որոնք աւելի աւելի նոցա համար օգտաւէտ կարող են լինիլ: Այսպէս բարերար էր Յիսուս. դորա համար եւս իւր կարօտութեանը մէջ հարուստ էր եւ ամէն հոգու ցաւ ունեցողներին՝ օգնական:

Եւ նորանով է՛ զօրացած. պատճառ որ նորանով գերեզմանի զարհուրանքներին անգամ յաղթեցի: Եւ ո՞վ է աւելի հզօր քան թէ այն զօրաւորը, որ ոչ մի բանից չէ վախենում: Եւ ինչո՞ւ համար պէտք է վախենայի, որ իմ Աստուծովս ուրախ եմ, նորան ապաւինած, ու իմ սրտիս հանգստութեանն, ուրախութեանն ու երջանկութեանը չափ չկայ: Կեանքի պատահմունքները, փոփոխութիւնները կարող են փչացնել մարմինս, որ հողիցն է առնուած, բայց հոգիս երկրաւորի վրան յաղթութիւն անելով, թեւ առած կ'իթռչի: Որքան որ աւելի մութ կ'լինի գիշերն, այնքան աւելի պայծառ կ'երայով կ'ուսաւորի ամէնափօքր լոյսն: Ամենայն անբաղտութիւն՝ առաքինութեան համար՝ յաղթութեան ճանապարհ է բաց անում: Արգար մարգի հիւանդութեան անկողինքը՝ առաքինութեան թագաւորական տախտն է դառնում, նորա գերեզմանն՝ այն տեղն, ուր որ յաղթանակ է կանգնում նա: Մարգիս հիւանդութիւններն ու ցաւերը՝ մարմինը կարող են թուլացնել, ուժից ձգել ու իրան խեղճացնել. բայց նորա բարեպաշտ հոգին աւելի եւս պայծառացնում են: Երկինքն երկրիս վերայ է շրջում, յաւիտենականութիւնն՝ անցաւորի վերայ. իսկ հոգին, որ յաւիտենականութեան մէջն է, երկրաւոր բաների ամէն վրդովմունքների վերայ: Երբ որ Յիսուս խաչի վերայ էր ու երկիրս շարժեց եւ արեգակը խաւաքեց երբ որ նա մեխուած էր ու կախուած՝ եւ իւր արիւնը թափվում էր աշխարհի վերայ, որի մեղքը նա քաւում էր, փուշ պսակը սուրբ գլխին, Նա, ամէն կողմից անարգանքի, արհամարհանքի ու նզովքի խօսքեր լսելու միջոցին, աղօթք էր անում Աստուծոյ, ու ասում. ներիր դորանց, ինչու որ չեն իմանում թէ, ինչ են անում: — Այն ժամանակն Նա ամենաաստուածային էր, այն ժամանակը նա երկրաւորից շատ բարձր էր, վերնային բարձրութեան գագաթնաձայրումն էր:

Եւ ամէն բան էաւրող է՛ Քրիստոսով, որով զօրացած է՛: Հեռու գնացէ՛ք ինձանից, ինչ որ կ'եանքիս ցանկալի ու սիրելի էք. ինչ

որ զարդ ու զարդարանք էք իմ անցկացրած ժամերիս. հեռու կայէք ինձանից իմ սոփորութիւններս. — Թող իմ մարմինս շատ ցաւի՝ ձեզանից զրկուելուն համար, ձեր իրանից հեռանալուն համար. — բայց հոգիս ազատ է ու զօրացած: — Դէն գնացէք, հեռացէք ինձանից, իմ ուրախութիւններս, որ գեղեցիկ ու անուշահոտ ծաղիկների նման սիրտս բաց էիք անում իմ այս կեանքումս. իմ արուեստաւոր երգերս, լացի ու արտասուքի փոխարկուելոցէք. իմ անմահ հոգուս համար՝ ամենամեծ տխրութիւնիս մէջն անգամ՝ դեռ եւս մի աւելի բարձր ուրախութիւն, մի հրճուածք մնում է ինձ՝ եւ այդ հրճուածքն աշխարհիս բաների ոչ մի փոփոխութիւնն ինձանից խել չէ՝ կարող: — գերեզման իջէք, իմ սրտիս սիրեկաններ, իմ տղայութեան հասակիս խաղի լաւ ընկերներ, որ ինձ հետ էիք անբաժան՝ աշխարհընդհանրութիւն չունեցած օրերումս. Թող արիւն գնայ սրտիցս, երբ որ հոգիաւ հրեշտակն ձեզ իմ ձեռքից կառնի. ձեր սպրտնած պատուական անշունչ մարմինը տեսնելով աչքիս առաջին, իմ հաւատս աւելի կզօրանայ ու կհաստատուի իմ սրտիս մէջն եւ իմ յոյսս աւելի եւս Աստուծոյ վերայ կգնեմ: Մեր հոգուն համար մահ, մեռնել որ՝ չկայ ու չկայ: Յիսուսը կենդանի է ու ես Նորանով: Աշխարհքիս մէջը մահ ստեղծող Աստուած չկայ, այլ միայն կեանք ու կենդանութիւն տուող Աստուած կայ: Մեք մի մինի հետ կըտեսնուե՞նք:

Հա՛, Քեզ հաւատալովս հաստատուն հաւատով, ամէն բան կարող եմ Քեզանով, ո՛վ իմ Փրկիչս, իմ՝ աւելի լաւ կեանք ունենալու միակ ու առաջին պատճառս: Դու աստուածային կրակ վառեցիր իմ սրտումս, որ չհանգչի: Դու ես իմ լոյսս, որ ինձ իմ գլխիս գալու փորձանքների խաւարից դէպ ի լոյսը հանելով, տանումես ինձ դէպ ի իմ Երկնաւոր Հօրս: Օրհնութիւն դու, որ ես քեզանով համարձակութիւն ունիմ՝ ռաբխանալու իմ ստեղծող Հօրս իմ վերայ ունեցած գթութիւնին, ողորմութիւնին ու սիրոյն վերայ: Ի՞նչը կարող է իմ ունեցած մխիթարութիւնս իմ սրտիցս խել ու ինձ զուրկ թողնել, եթէ որ ես ինքնս իմ սրտիցս չհանեմ, եթէ որ ես ինքնս չկորցնեմ. « Կառապանք, Լէ Դեղ-Լի-նը, հալածանք, Լէ սովը, Լէ Դերկո-Լի-նը, Լէ Լաւնգը, Լէ սո՛ւրը. Բայց այս մէկ Բանիքի Դժ Լաւաստի յաղթող կլինեմ Դեք Զորսով, որ Դեք Իրեց. Ինչո՞ւ որ էս հոռապա գիտեմ որ, ո՛չ մահը, և ո՛չ կեանքը, ու ո՛չ

հրեշտակները, և ոչ իշխան-նշխները, ու ոչ ներկայ բաներն, և ոչ
 փառ-բաները, և ոչ քաղցր-նշխը, և ոչ խոր-նշխը, և ոչ թո՛ւրեւ
 արարած թե՛ զնիւն իւրաց և Աստուծոյ յերկնս :

(Թարգ.)

Գ. Ե. Ա.

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԱՍՏՂԱՐԱՀԻԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

Գ.

Գ Ի Ս Ա Ի Ո Ր Ք.

(Նշանակ. Արքայ. Կէ՛ն. Բ. Ը.)

Գիտութիւն ասուած բանը՝ մարդկային մտաց եւ իմացակա-
 նութեան յաղթանակն է. նա կ'իյնի յամրաբար եւ աշխատա-
 նօք ամենեցունց գործակցութեամբը, եւ միշտ միօրինակաբար
 կ'ընթանայ յառաջ: Սա նախ կ'սկսի մասնաւոր իրողութիւններն
 եւ դէպքերը գիտելով եւ ինկատ առնով, յետոյ այդ մասնաւոր
 իրողութիւններն ի մի կ'ժողովէ, դոցա մէջ նշմարուած նմանա-
 գոյն հանգամանքներն ու յատկութիւններն ի մի վայր կամիօփէ,
 ի մի բան՝ այդ հանգամանքներն յառաջ բերող առաւել կամ
 նուազ ընդհանուր օրէնքներն կ'գտնէ, յետոյ մասնաւորէն առ-
 ընդհանուրն վերելանելով, կ'գտնէ մի սկզբունք՝ որ կ'բովան-
 դակէ բոլոր այդ նշմարուած մասնաւոր դէպքերն եւ սոցա երե-
 ւոյթներու օրէնքներն:

Յայնժամ շինուած է այդ մասին գիտութիւնը, զի կարող է
 ոք յայնմ հետէ ընդհանուրէն այլ մասնաւորին իջնելով, հա-
 չուել՝ բացատրել օրէնքներն եւ դէպքերն, եւ դոցա վերաբերմամբ
 լուծել ամեն ոեւ է հարց՝ որոց ոք կ'հանդիպի:

Նսկտոն, աստեղաց շարժման այլեւայլ երեւոյթներն ու հան-
 գամանքները նշմարելով՝ զննելով ու դասաւորելով, դոցա բո-
 լոր օրէնքն արդէն ամփոփած էր ընդհանուր ձգողութեան
 (attraction) սկզբանը մէջ, ուստի եւ գիտաւորաց այլ շարժման
 օրէնքը բացատրելու համար, առանց ոեւ է վարանման կամ